




Հ Ն Ի Ց - Ն Ո Ր Ի Ց  
(ԸՆԱՆՈՒ-ՋԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹՅՈՒՆ)



Ա

ՄԷՅՐԱՄԱՆԻ

Արդէն պատրաստուում էի ճանապարհ ընկնել դէպի Երկաթուղու կայարանը, երբ անակնկալ կերպով զանգը հնչեց և մտաւ ինձ մօտ իմ վաղեմի բարեկամ— Պ. Բուրգի գեղարուեստից ճեմարանի ուսանող Ս. Գ., մի շնորհալի Երիտասարդ և յայտնեց ինձ, որ լսելով իմ մտադրուած ճանապարհորդութեան մասին դէպի Հայկական հնավայրերը, ցանկանում են միանալ ինձ հետ ինքը և մի խումբ ընկեր Երիտասարդներ:

Ես սիրով սպասեցի այդ ցանկալի խմբին, մէկ կողմից ուրախանալով, որ իմ ուղևորութեանը օգտակար կարող են լինել այդ խմբի անդամները, որոնց մէջ կային ճարտարապետներ և մասնագէտ ուսանողներ, իսկ միև կողմից անչափ գոհ, որ համալսարանական նորաւարտ և ուսանող Երիտասարդներ սկսել են հետաքրքրուել հայի անցեալ կեանքով, նորա փառաւոր անցեալի աւելի փառաւոր մնացորդներով:

Եւ յերաւի հետեւեալ օրը պատիւ ունեցայ հիւրընկալել ինձ մօտ ճանապարհորդական ամեն պարագաներով զրահաւորուած այդ աշխուժ և հետաքրքիր խումբին:

Եւ այսպէս կազմուեցաւ մեր խմբակը, ուր բացի ինձանից և Գ.ից կային նորաւարտ ճարտարապետներ՝ Ա. Ռ. և Գ.Տ.Մ., հանքագիտական ճեմարանի ուսանող Ն. Տ.Մ. և Մոսկուայի համալսարանի ուսանող Լ. Խ.

Յունիսի 27-ին, կէսօրուայ 12 ժամին, Կարս-Թիֆլիզեան երկաթուղով մեկնեցանք Թիֆլիսից:

Սրը շոգ էր և անտանելի. երկաթուղու կողքերը ուղևորներով լի, իսկ սոցանից ոմանք տաժանելի ճանապարհորդութիւնը մեղմելու համար մեր պայուսակներից սեղան պատրաստելով անձնատուր էին եղել թըղթախաղի: Ճանապարհին, կայարանները դեռ պատրաստ չլինելու պատճառով, ծարաւից այնպէս պապակուած էինք ամենքս, որ երբ, երեկոյեան 5 ժամին, հասանք Ախտալա կայարանը, ուր իջնել որոշած էինք, կարծեցինք թէ ազատուած ենք դժողքի կրակից:

Արգարև, սիրուն տեղ է Ախտալա կայարանը, որից 1½ վերստ հեռու, անտառախիտ բարձրութեան վերայ, կառուցուած է համանուն վանքը: Մենք Թիֆլիսից որոշած էինք մեր ուղևորութիւնն սկսել ուղղակի Հաղբատ և Սանահին վանքերից, սակայն տեղագրութիւնը այն աստիճան յափշտակեց ամբողջ խմբին, որ մտադրուեցինք առաջ դիտել Ախտալա հինաւուրց վանքը, որ լոյներին է պատկանում:

Ախտալա կայարանը մի ամալի տեղ է և բացի երկաթուղու գծի մի քանի ծառայողներից՝ մէկը չկար, որ մեզ ուղեցօյց լինէր կամ որին կարողանայինք մեր ծանրօրցը յանձնել. և մինչ մենք շուարած նստել սպասում էինք՝ որտեղից որ լոյս ընկաւ Ալիխանը—իմ Պարնի էրի

հերոսը, մի աւանակ էլ առաջը և նորա հետ Մ. Ա. Ի նոր գնած կալուածքի պահապան Արտաշէս Տ.Ս.: Առաջինը մեր իրերը տարաւ Հաղպատ, իսկ վերջինս սիրա-յօժար յանձն առաւ ուղեկցել մեզ մինչև Ախտալաի ս. Աստուածածնի վանքը, որին յոյները «Մէլրամանի» են կոչում:

Վանքը ընկնում է կայարանից դէպի արևմուտք. և մենք սկսանք բարձրանալ անտառի միջով, որ, քանի բարձրանում էինք, այնքան խտանում էր, այնքան մեր առաջ բացուում էր հրաշալի տեսարան, սեպ-սեպ անտառապատ ժայռեր. մայր մտնող արևի խայտաբղէտ և գրաւիչ ճառագայթները ներդաշնակում էին լեռնային սքանչելի տեսարաններին. բաւական տեղ էինք անցելու երբ յանկարծ մեր առաջ բացուեց մի գոգ, շուրջը ցից-ցից և առիշեղ անտառապատ ժայռերով, իսկ գոգի մէջ, որպէս մանուկ մի կնոջ գրկում, բազմած Ախտալա վանքը, շրջապատուած վաղեմի ամրոցի աւերակ պարիսպներով:

Ախտալայի շուրջը իշխ. Իվան Մելիքովի հարուստ կալուածքն է, որ այժմ անցած է Բագուի միլիօնատէր Միք. Արամեանցին. իսկ վանքի հիւսիս-արևելեան կողմէ մի քանի դեսեստին լեռները պատկանում է Ֆրանսիական մի ընկերութեան, որ շահագործում է միջի բազմահարուստ հանքերը:

Այդ հանքերից առ այժմ դուրս են գալիս քիչ քանակութեամբ ոսկի, այլևէ արծաթ, դեղին ու կարմիր պղինձ, երկաթ և արծիճ:

Գիշեր էր և խիստ մութ, երբ հասանք վանքը և վանահայրը, Գերասիմ արեղան՝ մի բարի յոյն կրօնաւոր, հիւրընկալեց մեզ իւր բնակարանում: Վանքին կից հինգ տուն յոյներ կան. թէ վանքը և թէ գիւղացիք այնքան խեղճ են, որ եթէ մենք պաշար վերցրած չլինէինք

հետներս՝ անօթի մնալու պիտի դատապարտուէինք:

Տաք և հրաշալի գիշեր էր և մեր խումբը նախընտրեց քնել դուրսը պատշգամբի վերայ, գետնին ձգած անկողիններում, որ սակայն էժան չնստեց մեզ յուսադէմին տեղաց մի հեղեղ, որ ջրով լցնելով մեր անկողիններն ու շորերը՝ մեզնից ոմանց վերայ իւր հեռքերը թողեց և ապագայում:

Բայց շուտով մոռացանք մենք այդ պատուհասը. վասնզի լոյսը բացուելու պէս մեզ գտանք մի հսկայական և դիտելու արժանի տաճարի առաջ:

Այնուհետև էլ դժուար էր մեզ միասին ժողոված տեսնել. ամեն մէկը սկսել էր զննել իւրեան հետաքրքրող կողմից. ես՝ հնութիւնները, գեղարուեստագէտը՝ տաճարի նկարչական գեղեցկութիւնը, ճարտարապետները՝ շինութեանց ոճը, միւսը նիւթը և այլն: Եւ ամեն մէկը իւր ալբոմում ձևակերպում էր իւր դիտողութեանց արդիւնքը:

Վանքը և հագին և բոլորովին պարզ ձեռակերտ է, ներսից միանգամայն անշուք, իսկ դրսից քանդակներով (օրնամէնտներով), որոնք լիջեցնում են Անիի աւերակների վերայ պահպանուած զարդերն ու քանդակները և մեր տեսութեամբ հայ-վրաց ճարտարապետութեան ընտիր արտադրութիւններից մէկն են: Տաճարն ընդարձակ է և անսիւն. երկու կողմն ունի ընդարձակ ու փառաւոր երկու խորան: Այդ խորաններում մեծադիր վէմքարեր կան դարսած յատակին և նոցանից աջակողմեանում՝ դիտող աչքը միայն կարող կլինի որոշել մի տապանաքար, որի վերայ Մեսրոպեան հին և խոշոր երկաթագրով կարդացւում է Մովսէս երեցի հետևեալ տապանագիրը, որ մենք մեր ընկերակիցների հետ օրինակեցինք նոյն դիրքով, ինչպէս որ նա կայ:

**ՊՄովսէս քահանայս յիշեսջիք յաղաւթս ձեր:**

Տաճարի մէջ ոչ մի լիշատակարան չկայ, որից իմացուէր թէ որ դարու և ժամանակի գործ է: Սակայն մերձակայ ուրիշ վանքերի արձանագրութիւններին նայելով՝ մեզ թւում է թէ փ դարից հին չէ:

Եկեղեցու առաջը, անշուշտ աւելի լետին ժամանակներում, աւելացրած է պատշգամբաձև մի սիւնազարդ սրահ, ուր հանգչում են կալուածատէր իշխ. Մելիքովներ, ինչպէս նաև եկեղեցում. որոնց տապանաքարերի վերայ երևում են վերջին դարերի արձանագրութիւններ օտար լեզուներով:

Սրահի հարաւային կողմը սրբատաշ քարից մի փոքր դատարկ սենեակ կայ, ուր աւազանաձև մուտք է բացուում դէպի մի ստորերկրեայ անցք, որ այժմ կալնուած է:

Եկեղեցին զուրկ է ամեն միջոցներից. մի փոքրիկ այգի և ուխտաւորների աննշան նուէրներ — ահա՛ վանահօր բոլոր հասոյթը:

Կանխաւ տրուած պատուէրի համաձայն Հաղբատից բերուեցան մեզ համար ձիեր և մենք շնորհակալ լինելով հ. վանահօրից՝ յուլիս 28 ին հրաժեշտ տուինք Ախտալա վանքին:

Գիւղին կից է հանքը և մենք հետաքրքրուեցանք դիտել Հայոց աշխարհի այդ հարստութիւնը. իտալացի բովագործը անձանձիր շրջեցրեց մեզ հանքի խորքերը, որտեղից ստացանք ամեն մէկս՝ ոսկու, արծաթի, պղնձի, երկաթի և արճճի բնահանքի մի մեկտոր, և մեկնելով առաջարկեցինք բովագործին մի համեստ վարձատրութիւն. իսկ եւրոպացի արհեստաւորը, գոգոհութեան ակնյայտնի հայեացքով մերժելով այն՝ գոհացաւ միայն մեր լիաբերան շնորհակալութեամբ:

Հանքից ոչ շատ հեռու երկու վանք կայ, առանց արձանագրութեան, անշուշտ] Ֆրանսիական ընկե-

րութեան գրաւումից յետ՝ նոցանից մէկում յարմարա-  
ցրել էին կաթողիքական սեղան: Տարօրինակ էր տեսնել  
Քուգարաց հին և անմատչելի աշխարհում, հինաուրց  
սագաշէն մեր տաճարում ֆռանկ սեղան, նորաշէն և կար-  
կատած. և այն էլ թողած անխնամ և անասունների  
աղբանոց դարձրած...

## Բ

## ԱՒԱԳ ԻՇԽԱՆԻ ՄԱՏՈՒՌԸ:

Մէլրամանիից ցած գալով հասնում ենք Մաղալովի  
այգուն, որի հանդէպ սարալանջի վերայ մի աւերակ բեր-  
դիկ է գտնուում, իսկ սորա յանդիման մի փոքրիկ աւերակ  
եկեղեցի կայ. նորա հարաւային դրան առջև ահագին  
վէմաթոռի վերայ մի հսկայական ու սքանչելակերտ  
խաչարձան է կանգնած, մի երեսը քանդակագործ, իսկ  
միւսի և կողքի վերայ հետևեալ արձանազիրը:

+ Ի թՎիս ողղ կանգնեցաւ սուրբ՝ տէ-  
րունականս. յարեւշատութիւն աւագին. եւ  
ծինամ՝ ծղարութեան Պետրէի. եւ Հայրա-  
պետութեան Համղասպա. ես յակոր էրէց  
կանգնեցի զխաչս Ի հանգստարանի մերոյ  
զիս եւ զամուսին իմ յաղաւթս յիշեցէք:

Այս միւսնոյն արձանագրութիւնը Սարգիս եպիսկո-  
պոս Ջալալեանի ձանապարհորդութեան մէջ այս կեր-  
պարանքն է ստացել:

կանգնեցաւ խաչս օգնական Աւագայ  
յառաջնորդութեան Համղասպայ, և Ի  
ծինամ՝ ծղարութեան Պետրէի Ի թուին Հայոց  
ողգ ին:

Այս և առհասարակ մեր ուղևորութեան ժամանակ կատարած բազմաթիւ ընթերցումներն ու համեմատութիւնները վերջնականապէս պարզեցին մեզ համար, որ հանգ. Ջալալեանը ամենեւին ինքը իւր աչքով չէ կարգացել իւր «ճանապարհորդութիւն 'ի մեծն Հայաստան» երկհատոր հրատարակութեան մէջ առաջ բերած բազմաթիւ արձանագրութիւնները, այլ անշուշտ մի ուրիշ և չափազանց տգէտ անձն, որ ոչ թէ արտագրել է, այլ ուղղակի շարադրել իրանից. և մենք սկսեցինք նորինորոյ ընդօրինակել ամեն ինչ:

Ներկայ ճանապարհորդական գրութիւնիցս դուրս մենք առանձին հատորով կաշխատենք տալ Գուգարաց և Տաշրայ աշխարհների ընդարձակ և պատկերազարդ տեղագիրը, երբ ճանապարհորդութեան երկրորդ շրջանն ևս աւարտած կլինինք:

Յիշեալ եկեղեցու հարաւային դրան ճակատին կիսաբարձրական մի մեծ քար է եղել արձանագրութեամբ ծածկուած. այդ քարը ժամանակի ընթացքում ընկել է, կամ աւելի հաւանական է որ հանել են և տեղը նոր քար դրել՝ բոլորովին նոր և աղճատ արձանագրութեամբ, որ կիսատ է մնացել:

Կամաւ բարերարին Աստուծոյ յաստուածազաւր արքէ գէմէտրի: առաջնորդութեան տէր յովանխի ծինմծղաւրութն ամոն գէկանաւզութեան աւքրոպիրին: ես մեղ

Գ

ՄԻ ՊՏՈՅՏ ՀԱՂԲԱՏԻ ՇՈՒՐԶ

Ախտալի կայարանին չհասած՝ դիմաւորեց մեր խումբին երկաթուղու ճարտարապետ պ. Տ. և հրաւիրեց ճաշել մօտակալ այգում, որ կարծեմ պ. Յ. Ծու-

րինեանցի կալուածքումն է գտնուում. խումբը սիրով ընդունեց այս առաջարկը և մի մեծ ու սաղարթախիտ կազմուտակ հանգիստ տուինք մեր խոնջացած անդամներին:

Ճաշը շատ ուրախ անցաւ շնորհիւ ներկայ եղող մի վրացի իշխանի, որի կարծիքով Հաղբատի հռչակաւոր վանքը շինել են Հայերի համար վրաց թագաւորները...

Պ. Տ. ու մարդասիրութեան շնորհիւ երկաթուղիով մեզ հասցրին մինչև Հաղբատի տակի նոր կամուրջը և մթնելու պատճառով տրուեցաւ մեզ նաև մի ուղեցոյց ու լապտեր: Մենք ամենքս հրաժարուեցանք ձիով ճանապարհ գնալուց. բայց այդ աղջամուղջ գիշերը և այն սոսկալի քարքարուտ ելևէջներով չկարծէք թէ գոնէ ոտով կարելի եղաւ ճանապարհ գնալ. մեզանից շատերը մինչև նոյն իսկ Հաղբատ մագլցելով և չորս թաթի վերայ են գնացել, խարխափելով և մագապուրծ ազատուելով անդնդախոր ձորերն ընկնելուց: Վերջապէս 3—4 վերստ ճանապարհը 4 ժամում կատարելով գիշերուայ 11 ժամին Հաղպատ հասնելն ու քնելը մէկ եղաւ, նախապէս խնդրելով վանահայր Գեղամ հայր սուրբին, որ թոյլ տայ յոգնած իմբին մի փոքր երկար քնով կազդուրուիլ առաջիկայ ուղևորութեան համար:

Ընկերներս հանգստացան լայնարձակ պատշգամբում, որի գլխից կախուած էր մի պատմական զանգ իւր մեծ չուանով, որի համար պատմում էին, թէ 1875 թուի դարձեալ միևնոյն ամսին Հաղբատի այն ժամանակուայ վանահայր Սերովբէ եպիսկոպոսը կէս գիշերին քաշում էր հա քաշում և բարձր ձայնով կանչում.

— Աւագ, հայ Աւագ.

Հեռու մի խրճթից լսում է Աւագի (սրբազանի ծառայի) ձայնը, որ քնից արթնացած աչքերն էր տրորում:

— Ինչ՞ա, ինչ, ի՞նչ չէք թողում քնեմ:

— Ադա, ի՞նչ քնելու վախտ է, չե՞ս գիտեր որ վանքին էջը կորեր է. շնուտ արա, գտիր:

— Սրբազան, ախր էս կէս գիշերին ես ո՛ւր գըտնեմ էջը:

— Ա՛յ իմար, չիտե՛ս ուր կլլայ վանքին էջը:

— Ախր ի՞նչ իմանամ:

— Յիմար, էջը ե՛ս ախոռը կլլայ, ե՛ս ուսումնարանը:

Այդ այն ժամանակն էր, երբ վանական դպրոցը վանքի էջերի բնակարանի էր փոխուած շնորհիւ վանահօր, որ յայտնի աստուածաբանի հռչակ ունէր և երջ. Գէորգ կաթողիկոսի կոնդակագիրն էր...

Առաւօտը ժամը 4-ին էր ծէքը բացուած և լոյսը բացուած չը բացուած Գեղամ վարդապետս պատմական զանգը քաշում է հա՛ քաշում ինչքան կարող էր և կէս մեռած ճանապարհորդների վերմակները շարտելով ու հարայ հրոցով փախցնում իրանց տեղերից...

Այդ օրը ընկերներս դիտեցին վանքն ու նորա ճարտարապետութիւնը, իսկ ես ննջեցեալների դամբարանները, որոնցից շատերը՝ դատապարտելի անհոգութիւնից սկսել են անյայտանալ հողի տակ. վերցրի բահը և ըսկսեցի փորել այս ու այն տեղ. զանգակատան հարաւային կողմը Սարկաւաք վարդապետի տապանաքարից 10 քայլաչափ հեռու գտնուեցաւ մի տապանաքար խորհրդաւոր նկարով ու այս արձանագրով.

**Խոսարովի է տապաննս:**

Ժամանակը կարճ էր և իմ փափազս մնաց թերի. մանաւանդ որ նպատակս ոչ թէ Հաղբատն էր այլ շըրջակայ այրեր դիտելը. Սարկաւաք վարդապետի տապանաքարը եռանկիւնի է, որի վրայ մամուռի տակից կարգացուած է խոշոր երկաթադրով փորուած հետևեալ տապանագիրը.

արձանս այս սեմական է սովիեստոսի սարկաւազին. Ո.

Կարս-Թիֆլիսեան երկաթուղին Հաղբատի վերայ էլ ազդեցութիւն էր գործել. գիւղը լիքն էր ամարանոցականներով, իսկ վանքի մի քանի խարխուլ սենեակներում բուն էին գրել Թիֆլիսի քահանաներից ոմանք իրանց ընտանիքներով: Իսկ գիտելու և ուսումնասիրելու նպատակով անցորդներին, ասում էր վանահայրը, թիւ չկար: Չաշի էինք նստած, որ մի պարոն հէնց այդ նպատակով եկաւ և մեզ սեղանակից լինելով՝ պատմեց ինձ, թէ Սարիղամիշի մօտ Համամլի գիւղում Կոբատիել Մամայէլ բէկի և Թաթարխանի մօտ ինքը տեսել է հայերէն մի մագաղաթէ գրչագիր, Անիից տարուած, որ բէգերի պատմութիւնն է ներկայացնում իւր մէջ (?):

Երկուոյեան դէմ խումբը հրաժեշտ տուեց Հաղբատի սրբավայրերին և ոտով ճանապարհ ընկանք դէպի Պարնի-էրը. սակայն մթնեց ճանապարհին և մենք որոշեցինք գիշերել ձորում, վանքի այգում:

Այգու խոնաւ և գձուձ հիւղում անհիւրընկալ յարկի տակ կծկուեցանք այդ գիշեր և մինչև լոյս մեռամարտեցինք բազմերանգ չարաճճի գաղանների հետ: Առաւօտեան մեր խումբը երկուսի բաժանուեց. 4 հոգով գնացին դէպի Քոբայրի վանքը, իսկ ես պ. Գ. ի հետ մնացինք այրերը գիտելու: Խումբը պիտի միանար Օ. ձուն գիւղում:

Ես և ընկերս վերցրինք մեզ հետ քարազնա Ալի-խանին, որին Հաղբատից յատուկ վերցրել էի ինձ հետ, այգեպաններից մէկին, մի քանի այլ գիւղացիներ, հաստ սանդուխք-պարանս, որ Թիֆլիսից բերել էի հետս, քանի մի օժանդակ պարաններ և ալլն և դիմեցինք ձորամիջով դէպի Զառնի-էրը:

Անցնում ենք Հաղթատեցւոց այգիները և բարձրանում անտառապատ սարալանջը. այգիներից վեր մի ձիաքար կայ կոտրած խաչքարով. սորա մօտ մի քարակոյտ կոչւում է «Ըկոռալի գերեզման». իսկ Հանդէպի սեպ ժայռը «Աթոռոյկ»:

Ինչո՞ւ է Ակուալի գերեզման կոչւում այդ տեղը, հարցրինք մենք մեր ուղեկցին.

— Աթոռիկի մօտ վարելահողերի մէջ մի ժամանակ (խաչ<sup>1</sup>) ա եղել. հնձի մշակը հնձելիս որձ են մորթել, ընկնաւորով կերակուր են եղել եփելիս. էդ վախտը մէջը օձ ա մտել. Ակուալը տեսնում ու ձէն ա ածըմ, զայ է գալիս, որ թափէ մշակին, բայց մշակինն ուշագրուծիւն չեն դարձնում. էն ժամանակ Աստծու հրամանով ա ըլում ոնց ա ըլում, ակուալը մէկ էլ զայ ա գալիս և ընկնում մէջը. հնձաւորները կեղտոտած են համարում կերակուրը և դէն են ածում. տեսնում են օձը միջին. իմանում են, որ երեսուն ջանին մի ակուալը թափել ա: Յետոյ խալիսը ակուալին պատանում են ու պատարագով թաղում ըստեղ: Խալիսը գալիս ուխտ են անըմ ու մոմ վառում:

Եւ իրօք մի ցից քար իսպառ սևացել էր շատ մոմի ծխից:

Այս հետաքրքիր աւանդութեանը ականջ կախած անզգալի կերպով մօտեցել էինք Ջառնի-էրին:

Ալիխանը նորից կախուեց պարանից և մտաւ այրը ճիշտ այնպէս, ինչպէս նկարագրել էինք «Լուսմայ» ի նախընթաց գրքում, ուստի և այստեղ չենք երկրորդում. այսքան կասենք, որ այրից հանեց դարձեալ հին ու նոր գրչագիրների կտորներ, մագաղաթի և թղթի վերայ, սակայն ոչ մի ամբողջ գիրք: Շատ լետոյ մենք

1) Ուխտատեղի:

իմացանք, որ Ալիխանը մեզանից առաջ մի անգամ ևս մտել էր այդ այլը և գրչագիրներ հանելով վաճառել մի ուրիշի:

Բայց՝ թէ անցեալ և թէ այս անգամ մեր հանածները կամ Ալիխանի վաճառածը միմիայն փշրանքներն են այն հարուստ հաւաքածոյքի, որ զանազան ժամանակ հանուել են այնտեղից.— այդ մասին մենք կարդում ենք հ. Ղ. Ինճիճեանի «Աշխարհագրութիւն չորից մաս. աշխ.» գրքում. մ. Ա. հ. Ա. եր. 279.

«Հաղբաս... և այր ինչ հանդէպ վանացն ի դժուարին բարձրաւանդակի, յորում նախնիք վանաց պահէին զմատեանս առ ահի ասպատակաց լեռնականացն... Առաջնորդ կարգեցաւ ի Հաղբաս Աբրահամ վարդապետ թեքիրտաղցի, որոյ աշակերտ Պետրոս անուն յաւանդութենէ ծերունեաց տեղւոյն իրազեկ լեալ այրին և ի Թիֆլիս բաղաքէ հիւսուեն հնարագէտս ածեալ, պէսպէս մքենայաւոր գործեօք ելին ի դժուարամատոյց յայն պարիս վիմին. և բացեալ զդուռն այրին, գտին ի նմա բազմութիւն երկաթագիր և բոլորագիր մատենից. բայց առհասարակ եղծեալ և խանդարեալ. մինչև յայնչափ բազմութենէ մատենից մի միայն գտին անարատ ղերգերգոց մեկնութիւն Գրիգորի՝ Նիւսացւոյն գրեալ ի Տարօն ի Թ. Հայոց ն»:

Տանք մի քանի ծանօթութիւն մեր ձեռք բերած պատառիկների մասին.

Ա. Այրից ստացուած գրչագիրներից մէկը գրքի մի տետր է, 16 երես, խոշոր ընդորգեր, բամբակէ հնազոյն թղթի վերայ և վարի ու աջ կողմի մասերը փթած ու մաշուած խոնաւութիւնից, գրուածն էլ հազիւ ընթեռնելի: Անշուշտ ժգ. կամ ժգ. դարու գործ. գորա վերնագիրն է՝

Դաւթի փիլիսոփայի ներքողեան 'ի սուրբ խաչն քրիստոսի ասացեալ եւ զպատճառն անընթեր եղեալ Դաւթի քահանայի:

Մեծ դժուարութեամբ մենք կարդացինք դորանում հետեւեալը.

I եր. «Յոլովս և զանազանս գտաք գրեալ պատճառներըդինիս անհաւաստիս եթէ ուր և էր աղագաւ և յորմէ հարկաւորեալ գրեաց մեծիմաստն Դաւիթ փիլիսոսփոյ զիսմա. . . յաթէնս. . . . .

II եր. «Այլ ի ճշմարտատես արանց և բննողաց ի պատմութենէ զժամանակն և զպատճառն որպէս գտաք. . . րեալ եթէ հոգեկիրթ թարգմանիչքն հայերէն ընթերցմանց և գըտիչք աստուածապարգև գրոյն, սուրբն Սահակ և Մեսրոբ, ստացան յաշակերտանոց արիւմտաց, մանկունս ուշեղս փափկաձայնս և երկարոգիս և կարգեցին դպրոցս հրամանաւ մեծիկայսերն Թէոդոսի և Վռամշապհոյ արքային հայոց յամենայն տեղիս և զկատարելագոյնսն ՚ի նոցանէ արս կորովամիտս և առաքինիս առաքեցին. . . . սիրո . . . . . աղաբա . . . . .

III եր. «Տեղեկան և ասորերէն. . . նոցա կրթեալ յայսոսիկ ՚ի մանկականն հասակի, անդրէն դարձեալ իսկոյն թարգմանէին զաստուածեղէն կտակարանս, սկսեալ յառակացն . . . զովմոնի, զհին և զնոր կտակարանս յեղաշրջեալ ի հայերէն լեզու, են զվարդապետութիւնս մեկնողականս աստուածաշունչ մատենից: յորոց մի եւ առաջին Դաւիթ փիլիսոսփա համաթորդ մովսէսի խորենացւոյ, գառնկան, եւ եզնկա, մամբրէի և կորեան: Եւ ի ծերութեան հասեալ ժամանակ, Հարկաւ . . . հայրապետի . . . յոց գիւ . . . և ի պատու . . . մանա . . . ներբողէ

IV եր. «զաւրութիւն, եւ թէ զհարդ հին աւրինակաւքն հաւաստի ճշմարտութիւնն: եւ աստ եւ ի միւսանգամ յայանութեան որդւոյն Աստուծոյնա է յոյս ապաստանի հաւատացելոց: Բայց վարդապետն վարդան յայպէս գրէ թէ զի պիտոյ է մեզ ի բազում ծուփս և ի խնդիրս անկանել, գտի ասէ ի հին աւրինակս թարգմանչացն թէ էր սա աշակերտ մեծին մովսիսի բերդողին ի Հարբ գաւառէ ի Հերթն գեղջէ որդի առն բարեպաշտի եւ սիրելոյ մի նոցանէ որբ մի անգամ ըն . . . . յաշակերտութիւն հեղեղանական դպրութեան ի ժամանակս Վահան Մ . . . Մանդ . . . Վարդան . . . . .

V եր. «Դաւթի եւ զկորովութիւն բանից նո . . . եւ զանյաղթ իմաստութիւնն, վստահացեալ յառն բաջութիւն,

ետ գրել Տրամանաւ եւ սիրով ի նշան պարծանաց կաթուղիկէ եկեղեցւոյ եւ յամալթ դիմարանութեան հակառակողացն. զի որ ի ժամանակին յայնմիկ տարածեալ աղանդն նեստորականացն որք ի ժողովոյն քաղկեդոնի եկին ի հայս թիւրքով . . . . հաւատոյ զոր աւանդեցին եւ . . . , պատրելով զպարզամիտս եւ զխմարագոյնս. զսուրբ կոյսն մարիամ ոչ դաւանէին աստուածածին, եւ զխաչն ոչ խոստովանէին անձնկալ: վասնորոյ միջամուխ եղեալ քաջակորովն . . . իթ սքանչելի . . . . .

VI եր. «Նոյն ինքն խաչեալն աստուած ճմարիտ, եւ ի սմանէ հաղորդեալ համբուրիւ: եւ որ ինչ տիպք եւ աւրինակք էին ի հնումն կենսակիր խաչին զամենայն ի մէջ բերեալ գեղեցկայարմար բանիւք առ ճմարտութիւնն կացուցանէ: Եւ զի ի խնդրոյ Հայրապետին սրբոյ զայսոսիկ առնէ մեծն դաւիթ յայտ է ի պատասխանոյն զոր դնէ ի սկիզբն բանիս: Որ եւ եղեւ գրեալ յամենայն աւրինակս եւ ասէ այսպէս. Զառ ի յաստուածուստ պատուեալ սրբոյ քահանայապետիդ մեծանձնութենէ ընկալաք զհրաման որ զկնի սոցին բանք յարմարականք . . . դրողին: վասնորոյ բարևոք խորհա . . . :

Առ այժմ այսքանը յաջողեցաւ մեզ կարգալ ամենամեծ աշխատանքով: 8-դ երեսից արդէն սկսուամ է Դաւիթ անյաղթի խաչի ներբողը «Բարձրացուցէք . . . » կարմիր գունի խորագրով:

Մինչև այժմ մեզ յայտնի էր, որ «Բարձրացուցէքի» մեկնութիւնը գրել է ս. Ներսէս շնորհալին. իսկ այս հատուածից երևում է, որ նոյնը գրել է նաև ոմն «Դաւիթ քահանայ» Դաւիթ անյաղթի կենսագրութեան հետ միասին, որից մի հետաքրքիր կէտ է պարզուամ, թէ «Դաւիթը խաչի ներբողը գրել է Բաղկեդոնի ժողովից եկած նեստորականների դէմ, որոնք թիւրքում էին հայերին իրանց ուղղափառ հաւատից. մի հանգամանք, որ վենետկեցւոց հրատարակութեանց մէջ ոչ մի տեղ չէ իշխում:

**Բ.** Ձեռք բերած պատառների մէջ հետաքրքրական է նոյնպէս մի մեծ գրքի հատուած, 14 երես, մագաղաթի վերայ և բոլորգիր. դա կազմում է գրքի լա (31 դ) թերթը (16 երեսից) և է, ըստ երևութիւն Մայր Մաշտոցի մեկնութիւն. այս թերթի մէջ խօսում է կարգաւորների թաղման կարգի նշանակութեան մասին: Բայց հետաքրքրականն այստեղ այն է, որ մագաղաթի այդ թերթը ներկայացնում է կրկնագիր գրուածք. սկզբում դորս վերայ գրուած է եղել երկաթագրով. ժամանակի ընթացքում մեկանը կերել է և մաշել մագաղաթը, ապա թուղթը դարձնելով երկայնութեան վերայ գրել են նորը, որ դարձեալ մօտ 500 տարուան հնութիւն է կրում. ցաւում ենք, սակայն, որ չլաջողեցաւ մեզ վերականգնել նախկին գրածը երկաթագրով, որովհետև տառերի տեղերում ամենուրեք ահագին ծակեր են բացուած:

**Գ.** Մագաղաթէ երկաթագիր գրչագրի մի կտոր է, մի կողմից բոլորովին քարացած, իսկ միւս երեսից թերթւում է, սակայն մեկանը իսպառ իջած և գրուածը եղծուած: Ինքը կտորն էլ մի ափի չափ է, այնպէս որ դժուար կարելի է մի որևէ միտք դուրս բերել. յամենայն դէպս միայն քիմիական միջոցներով կարելի է կարգաւ այդ գրուածքը, որից ներկայումս զորկ ենք մենք:

**Դ.** Երկու տետրակ միանգամայն հող է դարձել, այնպէս որ եթէ փորձում էք բանալ թերթերը՝ իսկոյն փշրտում է սպիտակ կաւի կամ գաճի նման. նոցանից մէկում յաջողեցանք կարգաւ քանի մի բառ, որոնցից երևում է, որ դա մի հատուած է երկու բնութեան մասին ճառող գրքի:

**Ե.** Մագաղաթէ մի թերթի վերայ երկու երեսին քառանկիւնականների մէջ նկարուած են գոյներով թագաւորների պատկերներ. երկու երեսին աւելի քան 30 պատ-

կեր. հաստատ կարելի է այդ մագաղաթին և նկարներին աւելի քան 700 տարուան հնուութիւն տալ:

Ձ. Մի հատուած մագաղաթէ միջին երկաթագրով գրչագրից, որ եղծուել և այնպէս թափանցիկ է դառել, ինչպէս օձի շապիկը, որով բնականաբար դառել է անընթեանի:

Է. Մեծագիր թղթեայ գրչագրի մի թերթի ներքևի մասը. վերը եղել է մեծ նկար, իսկ տակը գրուած է մեծ երկաթագրով.

„Ձսաղովմոն նկարիչ. . .

Ը. Մագաղաթէ գրչագրի մի հատուած 4 երեսից, որ ըստ երևութին քերականութեան մեկնութիւն է. գոնէ այդպէս է երևում հետեւեալ տողերից.

«Յորժամ ասեմք, եթէ Դաւիթ գրէ, Դաւիթն անուն է, և գրէն ազգումն Դաւթի. և անուանն ազգամբն գրէ: Արդ զի յայտ արասցէ, թէ չէ ճշմարիտ անուն բայ, այլ նշանակիչ միայն անուանն, ասացան հոլովական, վասն զի ճշմարիտ անուն որ ի վերայ իրին դնի հոլովական է. . . »:

Թ. Մի հատուած լետին երկաթագրով բամբակէ թղթի գրչագրից, որ անծանօթ գրուածքի (հաւանօրէն տրամաբանութեան) մի գլուխ է. «գլուխ ժգ. յաղագս կատարելոյն և միոյ»:

Բացի սոցանից, ինչպէս «Լուծալ» ի նախընթաց գրքում ևս ասացինք, այրից ձեռք բերինք մի ամբողջ կոյտ մանր մունր գրչագիր կտորներ, տաշեղի նման կտրտած և պատռտած, որոնցից մի օգուտ ստանալ անհնար է միանգամայն, ուստի թողնելով նոցա վերծանութիւնը՝ շարունակենք մեր ճանապարհը:

#### Գ

ԱՁԱՌԵՆՑ ԱՅՐԸ:

Կէս օրը անց էր արդէն, որ ամենքս խաշուած շո-

քից, ծարաւից և աշխատելուց՝ թողինք Ձառնի և Պար-  
նի այրերն ու ուղևորուեցանք դէպի Սանահին:

ձտնապարհին զննեցինք «Ալլիխանի—էրը» և գը-  
տանք դատարկ: Մեր միակ յոյսը մնաց «Աչառի—էրը»,  
որ գտնուում է Սանահինի արևելեան կողմը  $1\frac{1}{2}$  վերստ  
հեռու նորանից՝ ահռելի մի ձորում:

Այդ ձորը 100 կանգունից աւելի խորութիւն ու-  
նի, որի միջով անցնում է Ունակայ ջուրը, մացառնե-  
րի և մատաղատունկ ծառերի միջով: Զորի աջ կողմը  
ապառաժ և անմատչելի մի տեղ երևում էր մի փոքր  
պատ և փայտեայ դուռը փականքով:

Գիւղացիք պատմում էին, թէ մի անգամ Հախպատեցի  
Մացակը մտել էր այդ այրը, որ երկու սենեկից է եղել  
բաղկացած և գտել էր այնտեղ մի քանի կազմած գրքեր  
ու հանել. սակայն ներսի սենեակը փակ գտնելով՝ չէ  
կարողացել բանալ, որովհետև ներսից քաջքեր են եղել  
մտիկ տալիս:

—Ադա, ի՛նչ էք խելքին զօռ տալիս, ինձանից մեծ  
քաջքը չկայ, բարկանում է Ալլիխանը այդպէս հաւատա-  
ցած գիւղացուց վերայ. և աւելացնում.—ինձ միայն  
ցոյց տուր, տէր հայր, և սոս՛ մտի էստեղ, թէկուզ  
իր կեանքում իսանի ոտքը կոխած չլի ու հեռուից թա-  
մաշ արէք:

Եւ իրօք, ինչպէս յետոյ հաւաստիացայ, այդ այրը  
զննուած էր, բայց շատ առաջ, անցեալ դարի վերջերը:  
Այս օրերս Ձալալօղլուց մեր մի բարեկամից ստացել  
ենք մի գրչագիր Մաշտոց, թղթի վեշայ գրուած, խո-  
շոր բոլորգիր, երկաթագիր մագաղաթէ պահպանակով,  
որից յետոյ մի անգիր թերթի վերայ գրուած է հետե-  
ւեալը.—

«Սանահնու ս. Աստուածածնայ վանիցն է, զոր հանե-  
ցաք ի յաջառննց այրիցն, ձեռամբ առաքել վարդապե-  
ւոսից Ե.»

տին. 1797, յապրիլի 9. յովսէփ արք եպիսկոպոս ուսաց երկրի հայոց, յազգէ երկայնաբազուկ արդութեանց»:

Ուրեմն այլը զննուած էր և միջի մատեանները հանուած:

Ի դէպ մի քանի տեղեկութիւններ այս գրչագրի մասին աւելորդ չենք համարում առաջ բերել այստեղ.

Դա գրուած է «Հոռոմայր գիւղում ընդ հովանեաւ ս. նշանի Յոհան երէցի ձեռքով ս. Էջմիածնի Տ. Յակոբ կաթողիկոսի օրով ուճիէ թուին: Յիշատակ է տէր Սահակի և . . . իւրայնոց»: Իսկ յետոյ, անշուշտ Հոռոմայրի վանքի աւերուելուց յետոյ, այս մաշտոցը գնել է Խաբէկը և իւր աղջիկը Գուլնը և ընծայել Սանահնի ս. Աստուածածնին Բարսեղ եպիսկոպոսի առաջնորդութեան և Տ. Եղիազար կաթողիկոսի օրով ուճիւրթուին: Մեր նպատակը չլինելով մանրամասն ուսումնասիրել ուղևորութեանս ժամանակ հանդիպած գրչագիրները, մաշտոցի բովանդակութեան մասին աւելորդ ենք համարում խօսել, բայց այստեղ առաջ կբերենք պահպանակից, որ վերաբերում է քառասնորդական պահքի վերաբերեալ մի ճառի, մի երկու կտոր հետաքրքրութեան համար:

. . . քառասուն աւուրն. կանեփատ, կտաւահատ, փոխինդ. հատ սամթաջուր: Արդ այս քառասնորդով տէրն ի լերինն փորձութեան տարաւ յետս զազտանաղ փորձիչն որ է աւրինակաբեր յաղթութեան ամենայն հաւատացելոց. . .

Արդ աւրէն է զայս պահոց զքառասնորդս հարկիւ պահել ի բարեկենդանէն մինչև ցղատիկ. քանզի բաւիչ և թողիչ մեղաց մար(դ)ոյն կոչի, այլ գինի և աղի, ձու ձուկն պանիր կոգի կաղտի բածին շիճուկ կաթին հեր ձկանմորէ. զայս բնաւ. ամենևին չէ աւրէն և ոչ վայել է ճաշակել. . .

Ուրեմն ի հնումն մեծ պասին ուտում են եղել կանեփատ, կտաւահատ, փոխինդ և հատ սամթաջուր:

Կան արդեօք այս տեսակ երջանիկ արարածներ և մեր  
 ժամանակ. . .

Բայց դառնանք մեր գործին:

Եօթը հոգի վեր ելան քարագլուխը և երկայն ու  
 հաստ պարանը կապեցին մի ծառից. մի երկրորդ բա-  
 րակ պարանով էլ Ալիխանը կապեց մի մեծ քթոց և  
 հաստ պարանն էլ իր մէջկից, նստեց քթոցի մէջ և  
 կամաց կամաց սկսեց իջնել դէպի այլի դուռը, որ 50  
 արշինաչափ ցածր էր բարձրաւանդակից. ծառը վտան-  
 գաւոր տեղ էր, ուստի և բոլոր մարդիկ պարանի մէ-  
 ծայրը աւելի հեռուից բռնելով՝ ծառի մօտ մնաց մի  
 հուժկու գիւղացի — Բարսեղը պարանը և քթոցը ղեկա-  
 վարելու համար:

Ես մի օգնականով հսկում էի այլի տակը ձորում,  
 իսկ դիմացի քարագլուխը լցուել էր բազմաթիւ սա-  
 նահանգներով, մարդ ու կին, ծեր ու մանուկ, որոնք  
 բոլորն էլ սարսափով էին նայում այդ գործողութեան  
 վերայ: Սակայն Բարսեղի հոգը չէր, նա մի կողմից կա-  
 ռավարում էր պարանը, միւս կողմից բարձր ու գեղե-  
 ցիկ ձայնով երգում

— Ելալա ըո մէ մովկդէ,

Մէնի փուլի ըաթ մինդա մէ,

Կաթդի դեն, կաթդի չաս,

Դուշա մայեա, պօմնիու վաս: <sup>1)</sup>

— Փերթերակապ արա, ա Բարսեղ:

— Հորթակապ արա, ձայնում էր օդի մէջ Ալիխանը  
 և նորա ձայնը թնդալով ուժգին արձագանք էր տալիս  
 ամբողջ ձորամիջում:

— Վայ ձեր օջաղն Աստօժ քանդի. Բարսեղ, ա

<sup>1)</sup> Հայերէն մի երգի մասն է վրաց և ուրս լեզուներով.  
 Այժմ որ ես մեռնեմ՝ ինչ հարկաւոր է ինձ քո փողը  
 Ամեն օր, ամեն ժամ, ով իմ հոգեակ, յիշում եմ ձեզ:

Բարսեղ, անակնկալ ճիչ լսուեցաւ հանդէպի բարձրաւանդակի վերայ ժողոված բազմութեան միջից.— նանդ մեռնի, Բարսեղ, տունս քանդեցիր, շուտ, թող էտ անդէրը, վէր արի, վնյ, ըրեխիս սպանըմ են...

Սակայն Բարսեղը շարունակոււմ էր իւր երգը և կատակներ անում Ալիխանի հետ, առանց ուշք դարձնելու իւր մօր լաց ու կոծին և աղերսին:

— Ալիխան, դարդ մի անի, դարդ, բան է որ եդ չգաս՝ ըէխէքդ մենք կպահենք մէնք:

Իսկ Ալիխանը պատասխանում է

— Յծացիր որ քեզ հմա հրկաւօր բան եմ գտե, դօտնեմ.— Տէրտէր ջան, թողը հասել ա էրի բերնի՛ն...

Բայց մեր և ամենքի սարսափը բռնել էր. Ալիխանը իջել հասել էր այրին. սակայն ժայռը դուրս ցցուած էր այնտեղ, իսկ այրը մնում էր 4—5 արշինաչափ ներսը: Յանկարծ մեր քարադնան սկսեց ճօճել քթոցով օդի մէջ. ամենքս դողալ սկսեցինք, թէ ձախորդութեան հանդիպելով և վերադառնալու հնար չունենալով՝ խեղճ մարդը խելքը կորցրել էր. բայց չանցաւ 5 րոպէ և աւժգին ճօճալու ժամանակ Ալիխանը իրան հասցրեց այրի դուռը և ընկաւ դռնից ներս:

Փռուք տուինք Աստծուն: Չանցած մի կէս ժամ վերևից ցած ընկաւ մի դուռը, անտաշ և կոպիտ դուռը, որ վերը լիշած առասպելական փակուած դուռն էր. դուռը ամբողջապէս փայտէ և շինուած փայտէ մեխերով. իսկ նշանաւոր է նորա փայտ է բարդ փականքը. դրան վերայ փորուած է հետևեալ արձանագիրը.

„Ես/Թր ես/Թտան սրկաւալք՝

„Ես միբիմ“:

Մի ուրիշ կէս ժամ էլ անցաւ և ցած գլորուեց մի քահագին քարէ սանդ: Դորանով էլ վերջացաւ մեր կո-

դոպուտը: Ալիխանը միևնույն եղանակով բարձրացաւ դէպի վեր և առաւօտը 9 ժամից սկսած այդ գործը վերջացրինք երեկ. 4 ժամին:



### Մ Ի Օ Ր ՕՉՈՒՆՈՒՄ

Մի օր հանգիստ առնելով Սանահնի հռչակաւոր վանքում՝ տխուր, շատ տխուր տպաւորութեան տակ մեկնեցանք այդ հռչակաւոր վանքից: Այն սրբավայրը, որ կողմում էր Բագրատունի հայ թագաւորների ամառանոցն ու դամբարանը, ուր հանգչում են հայ թագաւորներ և իշխանազուններ ու անթիւ նշանաւոր եկեղեցականներ, որ տուել է հայ գրականութեան բազմաթիւ մատենագիրներ և որ վերջապէս անուանի արքեպիսկոպոսների աթոռանիստն է եղել, ներկայումս ամայի, կիսաւեր դրութեան մէջ, միանգամայն ախնամ թողնուած. մի նորընծայ արեղայ է այժմ կառավարում այդ վանքը և քաղմաթիւ Արդութեան իշխաններ, որոնց տոհմական դամբարանն էլ գտնուում է վանքի հարաւային կողմը, իշխում են վանքի շրջակայ կալուածներին:

Ուրապտոյտ և անտառազարդ ուղիով շուտով հասանք մենք Սանահնի—Բագրատունեաց հռչակաւոր կամուրջին և սկսեցինք քայլելով բարձրանալ դէպի Օձուռ տանող ճանապարհով: Օրը շոգ էր և անտանելի. վերելքը չափազանց երկար, վայրենի բնութիւնը միակ սփոփելչն էր մեզ այդ տանջանքի մէջ:

—Ա՛խ մի ջուր, սառը ջուր, ձայնում էինք մենք՝ բայց ջուր չկար. և փոքր էր մնում որ փոխէինք մեր կարծիքը Լօռուայ բնութեան հրաշալիքների մասին:

— Զուր էք ուզում, մէջ մտաւ մեր ուղեկիցը, դէ փառք Աստծու, դրանից շատ էլ ի՛նչ կայ մեր աշխարհում. եկէք այս նեղ ճամփով դէպի Կնդարարը:

Եւ տարան մեզ անտառի խորքը մի աղբիւրի մօտ, որ երեք տեղից գրկաչափ դուրս էր ժալթքում ժալռի տակից. սնուն այն աստիճան, որ եթէ մատը դնէիր մէջը՝ սառոյց կկտրուէր:

— Ինչո՞ւ է, տղայ, այս ջուրը Կնդարար կոչուում:

— Կնդարար՝ այսինքն թէ կենդանարար. ինչու որ էս ջուրը շատերը խմելով առողջանում են: Սա գալիս ա Ամոճ գիւղից:

Եւ իրօք կենդանացնող ջուր էր. խմեցինք ինչքան որ կարելի չէր խմել:

Կէսօր էր, երբ հասանք Լօռուայ բարձրաւանդակին և հեռուից մեր առաջ բացուեցաւ մի ընդարձակ լեռնադաշտ, որի ձախ կողմը անդնդախոր լեռներ և նոցա ստորոտներում հայկական սիրուն գիւղեր: Շուրջը ամենուրեք հայ գիւղացիները հնձում կամ կալսում էին. երկիրը պարարտ և մշակուած է և մի թիզ չէիր գտնի խոպան և անապատ:

Հասանք Օձուն, որին 'ի հնումն Ուձուն և այժմ Օզուն. լար կամ Ուզունլար են անուանում: Այդ գիւղը հնումը պատկանում էր ս. Յովհան Օձնեցի իմաստասէր հայրապետին, որ գիւղի վերին կողմը շինեց մի հօլակապ տաճար, նրբաքանդակ նկարներով և զարդերով, որը չնայելով բազմաթիւ աւերմունքներին ու պատահարներին, այսօր ևս յապուշ է կրթում նայողին, այնքան նուրբ են այդ քանդակները և գեղեցիկ ճարտարապետութիւնը:

Եկեղեցին դրսից գրեթէ ամբողջապէս ծածկուած է եղել խոշորագիր արձանագրութիւններով. բայց տեսէք թէ մարդկային անխղճութիւնն ինչ հարուած է տուել:

այդ սքանչելի կերտուածին: Թիֆլիսի յայտնի վաճառականներ և բնիկ Օձնեցի եղբ. Աբովեանները տեսնելով իրանց հայրենի գիւղի այդ նուիրական հնուլթեան խարխուլ դրուծիւնը՝ իրանց բարի կամքով որոշել են վերանորոգել նորան և այդ գործը յանձնել են ոմն Սըմբատ Աբովեանին. իսկ սա առանց խնայելու եկեղեցու արձանագրութիւններն ու քանդակները՝ տաշել է տուել որպէս թէ նորոգելու նպատակով. և այդպիսով այն բազմաթիւ պատմական յիշատակարաններից, որոնք հազար տարուց ՚ի վեր զարգարում էին այդ սրբավայրը, մնացել են այժմ միայն շատ սակաւ տողեր և այն մեծ մասամբ անընթեռնելի, շնորհիւ անհմուտ քարտաշների: Իսկ քանդակների հազիւ հետքերն են մնացել...

Տաճարի շուրջը գտնուում է հին գերեզմանատունը, ուր թաղուած են շատ նշանաւոր մարդիկ՝ աշխարհական և հոգևորական կոչումից:

Ամենից չհետաքրքրականը մեզ համար՝ *Կոչնատունն* է: Եկեղեցու հիւսիսային պատից քիչ հեռու, հանգստարանի մէջ աստիճանաւոր պատուանդանի վերայ բարձրանում է մի եռաժանի արձան, մօտ 12 արշին բարձրութեամբ, կոփածոյ քարերից շինուած, ժանիքների մէջէմէջ երկու սիւնաձև միապաղաղ քարեր, բարձր և բարակ, որոնց վերայ հրաշալի քանդակներով փորագրուած են բազմաթիւ պատկերներ ս. Գրքից. այդ սիւներից մէկը այժմ մեծ մասամբ փշրուած է, իսկ նկարները մասամբ եղծուած:

Այս շինուածքի տակն ըստ աւանդութեան թաղուած է Սմբատ Բագրատունին. և առանց երկբայութեան կառուցուած է տաճարի հետ միասին:

Բայց ինչ բան է այս տարօրինակ կերտուածքը, որ ոչ մատուռի ձև ունի և ոչ զանգակատան և որպիսին չունին մեր տեսած հարիւրաւոր վանքերից և ոչմէկը:

Հին ժամանակ յայտնի է, որ զանգակի գործածու-  
թիւնը դեռ անյայտ էր, այլ մեր եկեղեցիներում գորա  
փոխարէն գործ էին դնում *կոշնակ*, որ մի երկաթէ  
կամ փայտէ տախտակ էր և դռնապանը քաղցրանուագ  
մեղեդիներէ ներդաշնակութեամբ ձողը զարկելով վրէն՝  
ժողովրդին ժամ էր հրաւիրում: Յարմարութեան համար  
դռնապանը այդ գործողութիւնը կատարում էր ուղղակի  
փողոցէ փողոց շրջելով: Արդ՝ մեզ թուում է, թէ այս  
շինուածքը ոչ այլ ինչ է, բայց եթէ կոշնակը կախելու  
տեղ, ուստի և դորան անուանեցինք *կոշնատուն*:

Օձուռն գիւղում Հ. Գեղամ և Հ. Ղազար քահա-  
նաների շնորհիւ մեզ յաջողեցաւ ձեռք բերել մի քանի  
գրչագիր մատեան, որոնց մասին հարկ եմ համարում  
մի քանի տեղեկութիւններ հաղորդել ընթերցողներէս:

Ա. Սաղմոս, բոլորգիր, թղթի վերայ, գրուած հա-  
յոց ԶԶԳ թուին — 1534 թ. փրկչական:

Սկզբում գրուած են 1, «Յառաջաբանութիւն Դաւթի  
«մարգարէի մեկնութեան Աթանասի եպիսկոպոսի՝ աղէք-  
ասանդրացուոյ ասացեալ» և 2. «Երանելոյն Եպիփանու  
«Եպիսկոպոսապետին Կիպրոսի արարեալ պատճառն եր-  
«գոցն սաղմոսին»»: Երկուսն էլ նշանաւոր են նորանով,  
որ զգալի կերպով տարբերում են նոքա արդէն յայտնի  
օրինակներից:

Ապա գալիս է՝ «բան 'ի Յովհաննէս Գառնեցույ  
Հոգելի վարդապետի, վասն Դաւթեան սաղմոսիս, որ ո-  
մանց յերկրայս թուի, որ հետաքրքրական լինելու հա-  
մար մէջ ենք բերում այստեղ»:

«Զսաղմոսս Դաւթի մանաւանդ թէ զերգս հոգւոյն  
սրբոյ՝ այլ և այլ աւելի և պակաս նուագեն մանկունք եկե-  
ղեցւոյ. ոչ ուսեալք զճիշտն և ոչ իմացեալ զճշգրիտն:  
Եւ այս եղև յանհոգութենէ ոմանց և 'ի սխալագիր գրը-  
չաց: Իրահամարձակք ոմանք՝ մտայօր իմացմամբ՝ տարագրե-  
ցին զուղիղն և զուղորդն: Ճնա և բազում անկամ վիճին

ոմանք ի նուագել զսաղմոսս: Եւ այլք ոմանք ծայրաբաղ առնելով բարբանջեն անզեղը սրտիւ. և անիմաստ բոյիւք. և ո՛չ յիշեն զասացեալն ի Դաւթեայ. թէ սաղմոս ասացից և ի միտ առից: Եւ զհրամայեալն ի Պաւլոսէ. եթէ սաղմոս ասացից մտօք. և սաղմոս ասացից հոգւով: Ամենայն ազգք՝ գրով երգեն զսաղմոսս. և հայք ի բերան առեալ ասեն վայրապար. բահանայք և ուսովք, մանկունք և կոզեռք. և հաւատար կանայք: Եւ երանի՛ թէ ամենայն որ հրճեալ նուագէր զհաստատն և զստոյգն: Այլ ես նուաստրս, Յովաննէս Գառնեցի՛ ծառայակից ձեր ի Քրիստոս Յիսուս, իբրև զայս ասանէի՛ խիստ վշտանայի տարակուսանօր: Ապա ճանապարհ արարեալ գնացի ՚ի մայրաքաղաք մենաստանն ի Հաղբատ և որոնեալ գտի ի թարգմանչացն գրած մագաղափ սաղմոսն մի: Զոր առեալ սուրբ վարդապետն սարկաւագ կոչեցեալ, այն որ զտօմարն երևեցոյց զհին հային: և նա սերմանեաց զայս ուղիղ և զուղորդ սաղմոսս: Եւ զի ոմանց՝ այլ և այլ երևի սա. բայց դու ով սրբիլի, ընկալ զայս գաղափար իբր բազում երկամբ ստուգեալ. այլ ամենայն ջանօք ջանայ՝ որ զինչ գրած է զայն ուսանիս. և զայն գրեսցե: հաստատութեամբ: Եւ ես զայն բանն որ կասկածաւոր թո՛ւի քեզ՝ բաց է ի բաց եմ գրել. դու մի կարծեր թէ պակաս է բանն. զի թէ ի վերայ հասանես խիստ աւգտիս. զի ճշմարտաբանէ. և լուսաւորիս հոգւովն սրբով. որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն:

Սաղմոսի վերջը կալ հետեւեալ լիշատակարանը.

«Փա՛ռք ամենասուրբ երրորդութեան հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ՝ Որ ետ կարողութիւն մեղսամած անձինս մարգարի՛ հասանել ՚ի յաւարտ աստուածաշունչ կտակի քնարանիս Դաւթի ի ԶԶԳ ամի կոյս կոչեցելոյ ի Մ՛ ամի բանակալութեան կարմիր գլխոյ: Եւ ՚ի հայրապետութեան տեառն Գրիգորի: Ի յերկիրս Քաջբերունւոյ՝ ի վանս Սուխարայ ընդ հովանեաւ ս. Աստուածածնի տաճարիս: Յառաջնորդութեան ս. ուխտիս Կարպետ եպիսկոպոսի և Ստեփանոս եպիսկոպոսի, և Մարգարայ վարդապետի: Յընտիր և ՚ի ճշմարտաբան աւրինակէ: Եւ զի հոգ տարեալ ստուգիւ և բազում աշխատութեամբ՝ գրեցի զսա յիշատակ Գրիգորիս կաթողիկոսին և ծնողաց նորին՝ Սբանդարին և

Շահուածին: Եւ եղբարցն ամիրայ՝ գուռջիբէկին՝ որ անկաւ ի ծոփն և բազում աւուրբ որոնելով լալոտ աչաւք և ոչ գասն և միւս եղբորն կանաչասաղարթ բարունակին՝ Սըմբասին, որ է սփոսիան և ուրախութիւն վշտագնեալ՝ և տըրտըմեալ սրաի անձին իւրոյ, զոր տէր աստուած պահեսցէ անփորձ և անասան ամէն: Այլ և հաւուն իւրոյ Սմբաս թագաւորին. և խանոյն՝ բէկի խաթունին: Եւ արեան առու հաւր եղբարցն՝ սրբազան կաթողիկոսացն՝ տէր Ջաբարիեանցըն: Որ ետ նըւէր՝ և ընծայ ի դուռն գերահազակ կըմբեթայարկ և երկնաման սուրբ խաչին Աղթամարայ: Որ է դուռն երկնից՝ և ճանապարհ արքայութեան. հրեղէն հացին սեղան և սքանչելի պասեբին զինարան: կարապետ և յառաջընթաց՝ գալստեան որդւոյն ասուածոյ: Եւ դուք ով սրբասէր՝ հեղահոգի և աստուածակրօն ընթերցողք, որք հանդիպիք սմա՝ սաղմոս երգելով և կամ աւրինակելով՝ յիշեցէք ի բրիստոս զԳրիգորիս կաթողիկոսն և զեղբայրն իւր զՍմբատն և զմեղաւոր գրիչ՝ զՄարգարէ Արճիշեցի և աստուած ձեզ ողորմի ի միւսանգամ գալստեանն. ամէնք:

Արտագրողի լիշտակարանից լետոյ դրուած է իւրան Գրիգորիս կաթողիկոսի ինքնագիր ընդարձակ լիշտակարանը այսպէս.

Փառք բեզ կիտնի. բող արեքսագոյն կիսագնդի. և դեմեարի արարիչ: Աւրհնութիւն և փառք. գոհութիւն և փառաբանութիւն և ամենայն բարեբանութիւն. հանդերձ երկրպագութեամբ: Ամենաբարի, ամենաաւրհնեալ. ամենաթագաւոր, սուրբ և երկրպագելի երրորդութեան և մի աստուածութեան ճշմարտի: Հաւր ամենակալի և միածնի որդւոյ նորա. և աւծելոյ նորա յիսուսի քրիստոսի տեառն մերոյ և հոգւոյն նորա սրբոյ: Որոյ ծառայս Գրիգորիս. էի՛, և ե՛մ. և եղէց: վիճակ և ժառանգութիւն. միայն թէ ընկալցի անարգամեծար տէրն: Որոյ շնորհիւն ցանկացայ աստուածային սուրբ սաղմոսարանիս. և ողորմութեամբ և աւգնականութեամբ նորին գտի: Արդ՝ ո՞վ աստուածասէր սիրելի և ուփացող ցանկալի. և բան զականս պատուականս սուրբ հոգւոյն նուագի: Բաղձալի բանից մարգարէին դաւթի, որով ամենայն կեանք մեր սովաւ բարեաւ աւարտի: Եթէ խաչահնի. թէ եկեղեցի. և այլ ամենայն բահանայագործուչ

Թիւն Աստուծոյ եկեղեցւոյ սաղմոսիւս կատարի: Եւ պատուի բանք մարգարէին դաւթի 'ի հրեշտակաց և 'ի տեառնէն հրեշտակաց: Նաև ամենայն հաւատացեալ մանկունք եկեղեցւոյ 'ի բերան ունին զայս նուագսդ: Իբրև ըզստին դիւրադիեցուցիչ մաւր: Ի բիմս սաղմոսեաց: Եւ ո՞ր բան յայտնի կարէ կացուցանել զգովասանութիւն սորին. այլ որ արբի ի սիրոյ սորին՝ նայ իմանայ զճաշակ բաղդրութեան սորին: Բայց սաստիկ աղաւաղեալ թիւրեցաւ բանք սաղմոսիս. 'ի ձեռն նորուսուծի գրչաց. և անփոթութեան ուսուծիւսուրաց, և հեղաթիւր բառից և լեզուաց. և յայլ ասացիկ սաղմոսաց, և յիրահամարձակ ոմանց, որ յանձնապատան ի բերան ևս գրեն առանց արինակի: Իսկ ես Գրիգորիս ծառայս ծառայիցդ Աստուծոյ. ի բազում ամս տենչմամբ տոչորեալ էի ի սէր ուղղաբան սաղմոսարանի:

Ահա հանդիպեցայ ընտիր և լաւ արինակի, որ էր գրած յիշատակարանին, թէ գրեցաւ սայ յօրինակէ ս. վարդապետին յովհաննէս գառնեցուն. ձեռամբ նորին գրեալ և ստուգաբանեալ ճշմարտիւ կրկին կրկին: Որ և նայ նոյն բաղձմամբ ի խնդիր լեալ էր ուղղաբան սաղմոսարանի. յորոյ յիշատակարանն գրեալ էր այսպէս: Եւ ապէ ասէ գնացի ի ս. ուխտն Հաղբաս և երկրպագեցի ս. խաչին և ս. գերեզմանի մեծի և տեսանող իմաստասիրին հայոց ս. վարդապետին յոհաննիսի, մականուն սարկաւազի, այն որ բազում ճգամք զսաղմոսն ի թարգմանչագիր սաղմոսարանէ գաղափարեաց: Զոր և իմ հանդիպեալ նորուն ս. վարդապետի սարկաւազի ձեռագիր սաղմոսարանին. և իմ առեալ զայն սաղմոսարանն համբուրեցի և ինձ ետու գրել զսայ յիւրմէն ամենայն ստուգութեամբ: Զբանն. Զգիրն. Զհարցուկն. Զհանգիստն. Զտունն. Զկէտն. Զստորն: Բայց մի որ իշխեսցէ տգիտաբար բան թիւրել. և կամ զգրեալսն չստուգել յաւրինակէս. որպէս և ես յովհաննէս գառնեցի: (Ապա գալիս է գորղաների, փոխերի, աուների ևն թիւր):

—

Ով դու մըտավարժ դըպիր, որ շնորհաց ես ասպընջական: Թուեա ըզտառիս համար. և քննեա յոյժ խորհրդաբար: որ է ի ներբուստն սէ. լի վերուստն ո՞ է յան.

դիման: այսբան համարովս են թիւ. ութ կանոն սաղմոսն ի լրման:

( (   
 U   
 ) )

1927թ

վ դոսրնտո դսզտի թրս յվթ ղզ ոիսմորտո հոթոնո ուտրվե  
-ուր ճ Ըս դտոասվդի վ ր յո դմտոոսթմզզ վ մս ւմտմտե  
-մհմսոյ բնո՛ տզղզթ ղ ուտրտո հոստտեմ տզրսթ ուտիտթ  
-դմեոտ ոզ ետհմսոզ մս ւվեմեմ քմտիտտմր րսն իյ

Աւրհնութեամբ ծանիք հոգևոր որդիք, որ սուրբն Գրի-  
գոր լուսաւորիչն մեր յորժամ զհայոց ազգս ի հաւատս  
եբեր և կարգ սահմանեաց: Եւ յերկրի բահանայս և եւ-  
պիսկոպոստէնս և օրինաւոր հասկ և իրաւունք հաստատեաց:  
Եւ զոր տեսեալ եմք ի գրոց և ի կանոնաց ս. Գրիգորի,  
այս է: Զպտղին. Զսրբադրամն և թէ զի՛նչ է սրբադրամն.  
Ի յամէն շունչ Ա դրամ: Զտեսառնականն. Զկենդան. մատ-  
ղին. Զյանկարծամահիցն: Զտանց բահանայիցն և զընտա-  
նեաց նոցա. և զբահանայիցն: Զմուելի բազմականն. և  
զկողոպուտքն. Եւ զհոգւոյ բաժինն: Զայս ամենայն տան ի  
վանքն: Եւ այն սարկաւագն որ երեցացու է. նորա պսակա-  
դրամն և զումաշ աւրհնէն եպիսկոպոսին է: Եւ այս յամե-  
նայն տեղիք հաստատուն կայ:»

Օձուկում, մի գիւղացու կալի առաջ նստած, հե-  
տաքրքրուում էի այս կարևոր լիշատակարաններով. շուր-  
ջըս հաւաքուել էին ինչպէս կալուորները, այնպէս էլ  
հետաքրքրուող փոքր տղաների ահագին բազմութիւն:

Տեսնելով որ հնոտի գրքերի սիրահար էի, նոցանից  
ոմանք սկսել էին կրել իրանց տներից էլ ինչ ասես հին  
ու մին գրքեր, բայց ոչ ոք չկարողացաւ գոհացնել ինձ,  
որովհետև բոլորն էլ դասագրքեր էին, գործածուած մեր  
նախկին դպրոցներում...

— Հապա, տէր Հայր, տեսէք, էս մէկը որ զորդ քո ուզածիցն ա, ձայն տուեց Գուլեանց տոհմից մի գիւղացի և մեկնեց դէպի ինձ շաքարէ ստուարաթղթի կազմով մի հնոտի գիրք:

Անհամբերութեամբ բացի գիրքը և երևեցաւ ինչ . . . .

«Կրօնի դասագիրք, կազմեց Գիւտ քահ . . .

Ծիծաղը ընդհանուր եղաւ այդ զուգագիպութեան վերայ:

Այդ օրը միևնոյն կալի վերայ երեք հոգի ուխտեցին իրանց որդւոց անշուշտ ուսման տալ և իրօք այսօր նոքա ուսանում են ներսիսեան Գպրոցում: Սակայն որքան հեռու է երեք թիւը առաքեալի 3000 թուից, որոնց մի օրում դարձրեց դէպի քրիստոնէութիւն . . . անշուշտ ինչքան որ ես հեռու եմ առաքեալին նմանուելուց:



Բ. Սաղմոսի մեկնութիւն. թղթէ, նօսրգիր. գըրուած Հայոց ոմիդ թուին և փրկչ. 1775 թ. արարատեան Հայոց մեծ գահում, այսինքն լուսաւորչի խորվիրապում Տ. Սիմէոն կաթողիկոսի և տեղւոյն յաջորդ Մարկոս վարդապետի օրօք, Բարսեղ արեղայի ձեռքով:

Այդ գըրչագրում առաջին կանոնից յետոյ մի երես դաստարկ կայ և այնտեղ հետևեալ ծանօթութիւնը.

«Եւ ի դաշան արարատեան է սուրբ Էջմիածինն՝ որ է Վաղարշապատ քաղաքն աթոռ թագաւորաց Հայոց մեծաց. և Դըվին քաղաք նման նմին. և Խորվիրապն որ է տեղիք չարչարանացն Գրիգորի Լուսաւորչին ի մէջ օձից ծԳ տարի. և յետոյ բերաւ բոլոր մարմինն ձեռամբ Գրիգորի մաքիստրոսի ՚ի Կոստանդինուպօլսէ և եղաւ ի վիրապին ի ներքս չորս սեանց եկեղեցւոյն. և ի բերանն վիրապին հանգուցեալք կան շիրիմք Բ մեծահոգակ և եռամեծի արեղբերաւոյս վարդապետին Վարդանայ և Ներսէսի շինողին. և գլուխն եղաւ ի

գրոց, ի յատակս վերապին ի ներքս ս. սեղանոյն ի պէտս  
բժշկութեան. բայց միայն ա ծնօան տարեալ ի Գանձասար  
'ի խնդրոյ Զիհան շիրային որ էր աներ մաքիսարոսի: Դար-  
ձեալ կայ այլ նշխարհս պատուականս Դաւթի Դանեցւոյն,  
և յիզտի բուզտի զինւորացն:

Անշուշտ շատ ընթերցողներ գոհ պիտի մնան, եթէ  
աւետեանք նոցա, որ այս գրչագիրը մի մեծ առաւելու-  
թիւն ունի միւս բոլոր գրչագիրներէց: Մինչդեռ միւս-  
ները միայն չոր ու ցամաք գիտութեան են նուիրուած,  
այս Բարսեղ աբեղայս (եթէ միայն սա է բոլոր լաւե-  
լուածներ գրողը) աւելի գործական մարդ է եղել և լաւ  
է հասկացել, թէ ինչ միջոցներով կարելի է իւրացնել  
աստուածաբանութեան և կրօնական գիտութիւններին  
նուիրուած հաստափոր մատեանների ընթերցումը և ա-  
հա բուն գրուածքի վերջը 'ի միջի այլ տեղեկութիւն-  
ների սովորցնում է մեզ հարստութեան ճանապարհը.  
եթէ չէք հաւատում՝ կարդացէք. —

Եթէ կամիս գիտել որտեղ գանձ կա, երթ նրկիրն  
Ընշտունեաց, ի գիւղն Վառնեց ուր կա մարմին ս. առա-  
քելոյն Թօմայի, 'ի կատար լերինն Դարունից անդ կա է  
կարաս կարմիր՝ ըստուգէ Աստուծով.

Դարձեալ ևս պատմութիւն. երթ Արձէշ կայնու յե-  
կեղեցւոյ վերեն մին բար կա աթոռով տակն Ա պղինձ կա հան:  
Առծուարեր յեկեղեցւոյ պատի մէջ Ա պղինձ կա Ա  
մատաղ արա հան:

Արձէշու բանտումայհի, ծովի ափն Բ ցից բար կա մէկ  
մէկ աման կաշուէ վերէն հան:

Պանտումահի կերթաս ծովի յափն մին խաչ կա աթո-  
ռովն է հետ շուռ եկ հան Բ կարաս ոսկի. վերջ:

Գ. Հիւսուածք Յովհաննու աւետարանի մեկնու-  
թեան: Հին և գեղեցիկ բոլորգիր, թղթի վերայ. վեր-  
ջից մի քանի թերթ և լիշատակարանը պակաս: Ան-  
վերնագիր և անթուական:

Այս գիրքը մենք հիւսուածք անուանեցինք, որովհետեւ այդ նիւթի վերայ գրող գլխաւորապէս Գ. դարու *ա*. հայրերի գրուածքներից մի ծաղկաքաղ է, ինչպէս այդ ցոյց են տալիս ամեն երեսի լուսանցքներում գրուած կրճատ անուանները՝ ոսկ. նիւ. սեք. նան. և այլն: Եւ եթէ վերջը մի տեղմիայն գրուած չլինէր լուսանցքում «սարկաւազի» բառը, մենք հակամէտ էինք ոսկէ դարու գործը համարել այդ գրուածքը, այնքան մաքուր և ընտիր ոճով է գրուած նա: Ահա՛ Յառաջաբանից մի կտոր. —

«Որք արտաքին հանդիսիցն լինին տեսողք, յորժամ զբանս մարտի է<sup>1)</sup> զոր մեծազաւրի բարեկամաց և սիրելեաց պսակեալ տեսանեն կամ լսեն. համագունդ ի վերայ դիմն մարմնով և հոգւոյ աչաւք, զի ի գործելեացն մի վրիպեսցին. նա և յերգս արուեստականացն ի ճախարակելն և ի սեթևեթել բանս փիլիսոփայոցն. զամենայն կարևոր պէտս թողեալ ուշ եղեալ լուռութեամբ զի զայն գտանել մարթասցեն»:

Գրքի 292-դ երեսին կարդում ենք հետևեալ տողերը, որի լուսանցքում գրած *ստ*. կրճատմունքը. բայց թէ որ Ստեփաննոսինն է՝ անյայտ է.

«Եւ ծանուցաւ հեթանոսաց անասնացեալ մտաւք. իսկ փարիսեցիքն ասէին ցմիմեանս տեսանէք զի ոչինչ աւգաթք. զի աշխարհ ամենայն գնաց զհետ նորա. զի ասացին թէ բոլոր աշխարհս պատուեն զնա. որպէս արգար թագաւորն հայոց ի հեռաւոր աշխարհէ ընծայս մեծ յղեաց նմա ի ձեռն պաշտանէիցն որ բերին նմա: Փափաք մեծ ունի տեսանել զնա և հաւատաց նմա. արդ հրէայքն և հեթանոսք գնացին զհետ նորա. թէ արկանեմք ի նա ձեռն, ժողովուրդ յառնեն ի վերայ նորա: Եւ բարկոծ առնեն զմեզ... և հեթանոսաց իշխանքն իմանան զանմահութիւն նորա և գան երկիրպագանեն որպէս անմահի աստուծոյ... Եին ոմանք անդ. յելիւոց զի հեթանոսք երկիրպագենն ի ամին. սորա առաքեալք արգարու առ քրիստոս յորժամ լուան ի հրէիցն

<sup>1)</sup> Այստեղ սկզբի տողերի կարմիր մելանը եղծուած լինելով՝ պարզ չէ կարդացուում:

Թէ կամին հրէայքն սպանանել շխտուս, քանզի ի տօնին անդ հանդիպեցան. և յաւժուութիւն ունէին ի հրէութիւն. սոքա մատեան առ փիլիպպոս և աղաչէին զնա ասելով. վասն զի լուան զղազարու յարութիւնն, ևս յորդորեցին, փութապէս տեսանել զքրիստոսն քանզի ի տաւրին անդ հանդիպեցան, և յաւժարութիւնն, այլ ոչ համարձակեցան. վասնորոյ և զփիլիպպոս աղերսեն. զի ոչ ընդ հրէիցն կարէին խառնել. . . գայ փիլիպպոս և ասէ ցանդրէաս. անդրէաս և փիլիպպոս ասեն ցոյսուս. . . և Յիսուս ասէ եհաս ժամ զի փառաւորեսցի որդի մարդոյ. զարանց գալն ասէ առ հաւատսն կախեալ. պատկեր գոլ հեթանոսաց գալ ի հաւատս հաստատելութեան» :

Իսկ զբքի նախավերջին թերթերից մէկում բերուած է մի հատուած «Խորենացուց», ինչպէս այդ ցոյց է տալիս լուսանցքում դրուած «Մովսէս քերթող» բառերը. թէպէտ այդ մասին մենք ոչինչ չենք գտնում Խորենացու մէջ: Այդ հատուածը հետևեալն է:

«Զի էր առանց կարանի, զոր յղեաց արգար հայոց թագաւորն. և հաւատով խնդրեաց գալ յաշխարհ իւր: գրեաց նամակ և ասէ. կամ աստուած ես. կամ որդի աստուծոյ, որ առանց արտաց բանիւ բժշկես. որ յառաջ քան զսիեզերս հաւատաց. և տէրն ետես զհաւատս նորա. նկարեալ պատկերին քրիստոսի տեսող եղև. որ և բժշկեցաւ ի թաթէոսէ, որ ի քրիստոսէ զբժէոս կոչեցաւ. և թւակից երկոտասան առաքելոցն»:

Յիսուսի պատմութեան մասին մի զբնագիր կայ մեր մատենադարանում, որի վերնագիրն է

«Յովհաննու ոսկեբերանի ասացեալ 'ի պատմութեանն».

Յիսուսի պատմութեան պատմութիւնը, որ ներկայացուած է այդ գրուածքում, իսկապէս մի ապոկրոֆ է, ուր պատմուած է թէ Յիսուսի անկար պատմութեանը Աբգարը գնել էր հովիւներէց, հովիւները մի հրաշքով ստացել էին այն երկնքից, իսկ Աբգարը իւր դեսպանների հետ ուղարկել էր Փրկչին և խնդրել որ գալ իւր քաղաքը: Ուշադրութեան արժանին դորա մէջ այն է, որ Աբգարը Յիսուսի համբառնալուց լետ Երուսաղէմ գնալով տեսնուած է

Փրկչի հետ և այս ամենը պատմում նորան, և այս բուրբ պատմութիւնը անում է ս. Յովհան Ոսկեբերանը . . .

Դ. «Գրիգորի եռամեծի քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի, աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ բան խրատական»: Վերջը. — «Սիմէոն վարդապետի Ջուղայեցոյ քերականութիւն»:

Այս գրչագիրը սկզբում մագաղաթէ երկու թերթ պահպանակ ունի, վրացերէն «Մուցուրի» գրով. մագաղաթը և երկաթագիրը 10 դ--11 դ դարու հնութիւն են տալիս նորան:

Այլաւերդու սրբազան Կիւրիոն եպիսկոպոսը մեր խնդրանքով սիրով յանձն առաւ թարգմանել այդ կարևոր գրչագրի հատուածը, որ երևեցաւ Ծննդոց գրքի գլ. Ժբ. 8—13, 18—գլ. Ժգ. 4, 7—11, 15—գլ. Ժդ. 1:

Համեմատելով այդ նորագիւտ հատուածը մեր նախնեաց թարգմանութիւն Աստուածաշնչի հետ՝ գտանք ըստ ամենայնի համաձայն նորան, չնչին տարբերութիւններով:

Ե. Ղուկաս կաթողիկոսի կոնդակների սևագիր տետրի ՄՂԳ.ՅՁ երեսները (գրելու թղթի ամբողջ 88 երես):

Այս տետրը գտնելը ցաւ պատճառեց մեր սրտին, որովհետև մի քանի ամիս էր միայն, ինչ որ մենք հրատարակել էինք «Իիւան հայոց պատմութեան» ժողովածուի Դ. հատորը, որ նուիրուած էր Ղուկաս կաթողիկոսին. իսկ նորագիւտ տետրը շատ պիտի ճոխացնէր լիշեալ աշխատութիւնը, եթէ իւր ժամանակին լինէր մեր ձեռքին:

Զ. «Կրթութիւն տետր ջերմեռանդութեան աղօթից, ժողովեալ և յարմարեալ 'ի Սամուէլ չնչին անիմաստ Աբեղայէ և վերատեսչուէ Պրուսայու, 'ի հայրապետութեան Տ. Յակոբայ ամենից հայոց կաթողիկոսի Շա-

մախեցոյ, յամի Տեառն 1760 յունվարի 3, իսկ հայոց 1209, 'ի Պրուսա քաղաքի 'ի ս. Աստուածածնի եկեղեցւոջ:

Է. «Շարունակութիւն կամ Հաստատութիւն յառաջագոյն գրեալ մերում տեսարանի՝ կամ

Յայտնի ապացոյց նոր հերձուածող լինելոյ վեր. Հ. Միքայէլի Չամչեանց և բոլոր միաբանութեան իւրոյ, քաղեալ ի բուն ձեռագիր գրուածոյ իւրոյ, զոր իբր հրաշիւք ձգեցաք 'ի ձեռս մեր. յամի 1815 մարտի 4:»

Այս են բոլոր գրչագիրները, որ մենք ձեռք բերինք Օձնում:

Բացի սոցանից տեղւոյն տէր Մովսէս քահանայի շնորհիւ մեզ հանդիպեցաւ տեսնել այնտեղ մի մագաղաթէ փոքր գրչագիր, գեղեցիկ գրչութեամբ, գրուած հայոց ՌՀՊ և փրկչական 1625 թուին Ձմիւննիայում ս. Նիկողայոս Հայրապետի վանքի դպրւտանը Յակոբ կրօնաւորի ձեռքով, որ պարունակում է իւր մէջ ս. Ներսէս Շնորհալու բոլոր չափական գրուածքները և Վահրամ վարդապետի «Պատմութիւն հայոց ազգի» հետեւեալ դասաւորութեամբ.

Յիսուս որդի ս տուն

Վերջը՝ «Ո՞վ պատուելի և հեղահոգի եղբայր զօհրապ յիշեա զաշխատողս զյակոբ և զծնողս իմ՝ աղաչեմ յիշել ի Տէր:»

Նորին Ներսէսի Ալայեցոյ ասացեալ ներտաղական ի հոգւոց համայնից.

— — — բան հաւատոյ վասն Անեղին և եղելոյ.

— — — ի խրատ մանկանց ուսուցանականաց

— — Յիշատակարան յառակացն Սողոմոնի:

— ի ժողովաւղ անուն ասացեալ.

— Յաղագս երկնից և զարդուց նորա, բարաւնաբար ի դիմաց նորա ի չափ երկոտասանից պարեալ ոտից

— Նոյնաչափն այլաչափ

— Այս փոքրիկ կոթասոս, սայ մարգարէին է.

— Խոչտովանիմ աստուած . . . տունք չծ.

— Հարադրութիւն հոմերական վիպասանութեամբ. սակս  
Հայկազնոյ սեռի և արշակունեացն զարմի.  
ապա՝ Յիշատակարան արտագրողի.

Պատմութիւն Հայոց ազգի, գրեալ յոտին չափոյ բանի,  
Վահրամայ վարդապետի, Կիւրիկեցւոյ Սըսոյ բազբի.  
Վերնագրի միւս երեսը՝ հեղինակի պատկերը գոյներով  
և ոսկով.

Խրատներ բարոյական. — «Ասացից բան մի յայանի՝ որ օգ-  
տակար է . . .» ոտանաւոր չափով.

Եւ վերջապէս գրքի վերջը կալ մի բաւական ըն-  
դարձակ դարձեալ չափական բանաստեղծութիւն

«Առաքել երիցու բանիբուն և շնորհալից բահանայի  
ասացեալ բան քաղցրաշար

'ի նախահայրն մեր սկսեալ  
և կարճառաւտ յառաջ եկեալ,  
մինչ ի ծնունդ տեառն հասեալ,  
և փրկութեան պատճառ եղեալ»:

Գեղեցիկ ոճով մի նկարագիր է սա Յիսուսի ծնըն-  
դեան յարակից հանդամանքների, սակայն ս. գրքից այն-  
քան շեղուած է երևում, որ թւում է մեզ թէ սա ևս  
հալ բազմաթիւ ապոկրիֆներից մէկն է, միջին դարու  
արտագրութիւն: Մենք 'ի լոյս կընծայենք սորան ա-  
ռանձին գրքովով:

Ե

### ԱՐԴՈՒԻ ԳԻՒՂԸ

Օձունում մեր անցկացրած օրը գրեթէ ամբողջապէս  
մի գրական ցերեկոյթ էր: Բայց չմոռանամ ասել, որ  
այդտեղ արդէն միացել էին մեզ հետ մեր ընկերու-  
ղեկիցները, որոնցից բաժանուել էինք Հաղբաթի այգուց:  
Օրը երեկոյացել էր և մենք, կազդուրուելով մի-

թեթև ճաշով, պատրաստուեցանք ճանապարհ ընկնել արևմտեղից,

Ի պատիւ Օձնեցւոց պէտք է ասել, որ արևմտեղի հայ ժողովուրդը չափազանց բարեհամբոյր ընաւորութիւն ունի և ամեն կարելի յարմարութիւններ ընձեռեց մեզ. անշուշտ Յովհաննիսիսի առաքինութիւններից մի հետք մնացած էր նոցա վերայ, արևինչ, ինչպէս յետոյ կտեսնենք, շատ տեղեր միանգամայն նոցա հակապատկերն էր ներկայացնում ժողովուրդը:

Արևն սկսել էր խոնարհել, նորա վերջի ճառագայթները տարածուելով Տաշրաց աշխարհի լեռների ու Օձունի լեռնադաշտի վերայ մի խորհրդաւոր վսեմութիւն էին տալիս այդ ամենին, երեկոյեան զովարար հողմը ակորժ գիւրութիւն էր տալիս մեր վաստակած մարմնին, բայց մեր ձիերը շտապում էին գէպի հանգիստ, դէպի մօտակայ Արգուի գիւղը:

Սիրուն տեղ է Արգուին. երեք կողմից մասամբ անտառածածկ բլուրներ, իսկ արևելեան կողմից բաց, որտեղից երևում է Լօռուայ գաւառակի մեծ մասը:

Տեղացիների ասելով, Արգուի գիւղի անունը սկզբում եղել է Մելիք-գիւղ (Մելիք-քեանդ): Ութերորդ դարում ս. Յովհաննիսի Օձնեցու ընակութեան տեղը եղել է Օձուն գիւղը, ուր, կոչնատան առաջ թաղուած են և նորա ծնողները: Աւանդութեամբ Յովհաննիսի Օձնում տիրացու է եղել. գիւղում եղել է նաև Յովհաննիսի անունով մի նախրչի. սա մի կնոջ հետ յարաբերութիւն ունենալով՝ զաւակ է ունենում. ժողովուրդը շատ է ստիպում նախրչուն իմանալու իսկութիւնը և նախրչին աջատուելու համար՝ ասում է թէ երեխան տիրացու Յովհաննիցն է: Կանչում են սորան, շատ անպատում են և անարգում, թէ ինչո՞ւ այդպէս վատ գործ է կատարել. իսկ Յովհաննի մերժելով մերժում է և Աստծուն

խնդրում, որ նորա հրամանով երեխան իր հօրը ճանաչի. և ճշմարիտ որ երեխան իւր բերանով ասում է թէ իմ հայրը նախըջի Յովհաննէսն է: Այնուհետև տիրացու Յովհաննը Օձնից հեռանալով գնում է Արդուի և այնտեղ շինում իւր համար ճգնուելու տեղ և եկեղեցի, ուր և թաղուած է այժմ ինքը: Օձնից հեռանալով, ս. Յովհաննը անիծել է Օձունը և գնալով Մելիք-գիւղը՝ վերջինս անուանել է Առ տուի, որպէս թէ Մնլիկն առայեւ Օձունը տուի: Այս անէծքը կատարուելով շատ տարիներ Օձնում անբերրիութիւն է եղել և իրանք Օձնեցիք ասում են թէ իրանք անիծուած են և մէջները հաշտութիւն չի լինելու:

Այս աւանդութիւնը մենք լսեցինք գիւղականների բերնից:

Յովհան Օձնեցու վանքը գտնուում է Արդուիից  $1/2$  վերստաչափ հեռու դէպի արևմուտք, լերան լանջի վերայ. մի երեցփոխան միայն ունի, որ և՛ վանահայր է և՛ տիրացու և՛ ամեն ինչ, իսկ կարևոր դէպքերում գալիս է Արդուիի քահանան. վանքը կալուած չունի, այլ լոկ մի փոքր պարտէզ: Վանքի տօնը կարմիր կիւրակի օրն է, երբ գալիս է մեծ բազմութիւն ամեն կողմերից:

Վանքը շատ խարխուլ բան է, բայց ունի մի հին քրգաձև և հաստահիմն զանգակատուն, եկեղեցու ներսը սեղանի առաջ դրուած է քարեայ հաստատուն դագաղ, վրան ծածկուած մի քարէ անտաշ և հսկայական կափարիչ, որի մէջ ամփոփուած է սուրբ Յովհան Օձնեցի իմաստասէրի սրբասնեայ մասունքները:

Արդուի գիւղի մի մասը պատկանում է Լօռու Մելիքեաններին, իսկ միւս մասը Քալանթարեաններին: Լօռու Մելիքեաններին է անցել՝ կնոջ՝ Արղութեանների կողմից և Ամոճ գիւղի մի մասը, ինչպէս նաև ամբողջ Աքոռին, Սանահնի և Ունակի մի մասը:

Որ այդ գիւղը այդ երկու տոհմի սեպհականութիւնն է՝ դա ունի իւր խորունկ պատճառները.—

Արդուին և շրջակայքը եղել է սեպհական կալուածք ս. Յովհան Օձնեցու տոհմին, որ, ըստ մեր պատմագիրների, «էր յազատ տանէ». այդ գիւղը կառավարել են միշտ Օձնեցու տոհմի շառաւիղներ, որոնցից մի մասը Մելիք, իսկ միւսը Քալանթար տիտղոսն են կրել. այդ հին ժամանակ. իսկ վերջին դարերում դոքա կոչուած էին Լօռու-Մելիքներ և Լօռու-Քալանթարներ, որովհետև թէ նոցա սերունդն էին և թէ պարսից տիրապետութեան ժամանակ դոքա վարում էին երկրի մէջիքութեան և քալանթարութեան՝ պաշտօնները. բայց դոցա իսկական տոհմանունը եղել է Տայիլներ. այսպէս է կոչուած և ներկայումս Արդուի գիւղի մի թաղ, ուր կայ և նոցա ապարանքի աւերակների հետքերը: Ներկայ դարու սկզբում դոքա բաժան. բաժան լինելով՝ փոքր եղբօր ճիւղն իրան անուանում է Լօռու-Մելիքեաններ, իսկ մեծինը ուղղակի Քալանթարեաններ, որոնք երկուսն էլ կալուածատէրեր են այդ գիւղի:

Գոնէ այսպէս է պատմում տեղացի ժողովուրդը.—  
Մենք շատ հետաքրքրուեցինք ս. Յովհան Օձնեցու վանքի առաջ տարածուած վաղեմի և ընդարձակ գերեզմանոցում գտնել այդ տոհմի շառաւիղների շերիմներ, սակայն 'ի զուր. միայն մի մեծ տապանաքարի վերայ, զանգակատան արևմտեան կողմը, կարգում ենք հետևեալ տողերը.—

Այս է տապան մէ

լիբաց

Ամիրջ

անի որդ

Ի Պաւղ  
 ոս պարոն  
 տէր սուրբ  
 յոհան  
 այ ծա  
 ռայ

Իսկ կողքի խաչքարի վերայ

խաչքէ՛ճան

+ Եպիսկոպոսին +

[ԹՎ ՌՃԻԴ = (Ուրեմն 1685 [Թուին]):

Մեր մատենադարանում գտնուում է Եփրեմ Արքեպիսկոպոսի 1807 թ. մարտ 3-ին գրած մի թուղթ ուղղուած աղայ Սարգիս Լօռու-Մելիքովին, կնոջ Կղէոպատրին և որդի Մովսէսուշկային:

Ել ուրիշ գրաւոր կամ բանաւոր տեղեկութիւն մենք չգտանք Արգուիում Լօռու-Մելիքեան տոհմի ծագման մասին:

Արգուին, ըստ երևութին, շատ մեծ գիւղ է եղել, սակայն, ինչպէս պատմում էին տեղացիք, ժողովուրդը մեծ բազմութեամբ գաղթել է Արգուին, որ և կոչուել է նորա անունով:

Այս գաղթը, մեր կարծիքով, կարող էր լինել անցեալ դարու վերջին, երբ լէզգիներն ավերեցին թէ գիւղը և թէ ս. մենաստանը:

(Տես մեր «Իրիւան Հայոց պատմութեան», գիրք Գ. կոնդակ Ղուկաս կաթողիկոսի 1792 գեկտ. 18):

Քալանթարեանների մեծ մասը ապրում են գիւղում և իրանց կալուածների կառավարութեամբ ապրում: Մենք իջևանել էինք նոցանից պ. Բէժան Քա.

լանթարեանի մօտ, որի բնակարանը գտնուում է ձորի գլխին և գիւղի լաւագոյն տներէց մէկն է. գիշերելով նորա մօտ և ընդունելով պատուական տանտիրոջ սիրալիր հիւրասիրութիւնը՝ միւս առաւօտը վաղ ես ու ընկերս ձի հեծնելով՝ արշաւեցինք դէպի Այգեհատ իսկ միւս խումբը արդէն Օձունից ժամանակաւորապէս հեռանալով մեզանից՝ գնացել էր մերձակայ վանքերը դիտելու

(Կը շարունակուի)

ԳԻԻՑ Ա՝ ՔԱՀ՝ ԱՂԱՆԵԱՆՑ

